

ԿՈՄՓՑԱՍԵԱՆ

ՊԱՐՈՒՆ Ա

Գարնան հովե՛ր, եկէ՛ք շնչել կուրծքիս տակ,
Ես դաշտ կ'երթամ ժըպիտ եւ վարդ քաղելու.
Հողիս դատարկ՝ ծառաւ ունի անյատակ,
Եւ սիրտս անհուն կարօտ՝ դարնան երգերու:

Փըչեցէ՛ք ով հովեր, հովե՛ր անտառի,
Ի՛նչ ներդաշնակ երգեհոն է այս հնչուն
Թաւուտքի խորն, առուակին քով սրաշտելի.
Ամէն ձայն երգ է, ամէն քար՝ սիրտ փխրուն:

Աչքերուս մէջ դաշտին գոյները կ'ապրին,
Ինծի եկէ՛ք դուք մանուկներ թարմագեղ
Եւ աղջիկներ վարդանըման մեր երկրին՝
Երգելու ինձ երգը դարնան սրտաղեղ:

Թեթեւ, աննիւթ գեղեցկութիւն հողեկան
Երբ դայ հըպիլ մունջ կիթառիս լարերուն՝
Շընորհք ու սէր, անձրեւներու պէս դարնան,
Կ'ողողեն զիս երջանկութեամբ պարարուն:

ՊՈՒԹԱՆԵՐԳ

Սիրեցի ես շունչը զըւարթ գեփիւռին,
Ի՛նչ գգուանքներ բերաւ ինձի լեռներէն.
Սիրեցի ես խօլական պարն անմարմին՝
Արտերուն վրայ փէրիններուն լուսեղէն:

Ու մեկնեցայ արշալոյսին գոյներով՝
Դէպի գիւղերն իմ հայրենի պապերուն.
Հարուստ էին անոնք բոյրով, արեւով...
Մըշակներն ալ գըտայ կեանքով ակաղձուն:

Համբոյր տըւի հողին բարի, գութանին,
Համբոյր տըւի եղներուն ալ հեղադէմ.
Սիրտըս մաս մաս բաժնեցի հոն ամէնքին,
Որ ինձ երգ տան՝ համբոյրներուս փոխարէն:

Եղբայր եղայ ցաւին՝ արդար հնձուորին,
Եւ ժողվեցի աշխատանքին քրտինքէն
Մարդարիտներ ոսկենըկար մեր կեանքին,
Բաշխելու զերգ նըւէր անդին՝ մեր հողէն:

Վարէ՛ դութան, պատռէ՛ հըպարտ կուրծքն հողին,
Որ ցոլբերուն հետ կենսաշող արեւուն՝
Հնձենք ուրա՛խ փարթամ դանձերն արուեստին.
Հիանայ աշխարհ, սիրէ մեր երգն ու լեզուն:

ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՅՇ

Ասողեր մէկ մէկ վար կը նային երկինքէն,
Լուսնակն անոյշ կ'երգէ իր սէրն հեռուոր՝
Պարզած թեւերը հրեղէն:

Ու հովիւներ մարգերուն վրայ գիշերուան,
Շողերուն մէջ արծաթ լոյսի հեղեղին՝
Սըրինդ կ'ածեն գիւթական:

Ես անբաժան, սիրտըս վառած աստղերէն՝
Երգ կը քաղեմ, կ'ըմպեմ դինին անապակ
Երազներու աշխարհէն:

Լուսնա՛կ գիշեր, անփակ տաճար խորհուրդի,
Կը սիրեմ լուռ դաշնակութիւնը վըսեմ
Եւ կ'ունկընդրեմ անհունին:

ՀՈՎ ԱՐԷՔ

Հովիտին մէջ մենաւոր
Սըրինդ մը կու լայ, հո՛վ արէք, հո՛վ, իմ սարեր,
Դարման արէք եւ կամ տըւէք մութ խորհեր՝
Իմ ցաւերուն բիւրաւոր:

Կողէն ի վար բլրակին
Կ'իջնէ հօտաղն յուզուած, լալով ողբադին
Սրինգն ինչպէս, որ կը խօսի իր սրտին,
Երգելով ցաւն հողին:

Անոյշ հո՛վն է որ կ'անցնի,
Փայփայելով յոգնած ճակատն արեւէն.
Երբ կը լըռէ, ձայներ կու գան հեռուէն,
Սիրտը լայն լայն կը բացուի:

Արցունք կու լա՛ն ամպեր մով,
 Խաղաղութիւն եւ զովութիւն սրտերու.
 Թող զան հովերն անգամ մըն ալ, տանելու
 Վիշտերը մեր դէպի ծով:

Ալիք ալիք կը լայնան
 Ձայներն այսպէս, որ կը հասնին հովիտէն.
 Անոնք դադանի ծաղկելով իմ մէջ նորէն
 Կ'իջնեն ուրիշ սրտի վրան:

ԱՆՏՈՒՆԻ

Ա՛լ հիւանդ ես, ոտքիդ փոշին թօթափէ՛,
 Պանդո՛ւխտ, ճակատդ յոգնած կուրծքիս թող հանգչի,
 Քիչ ատենէն կռուենին աւետիս կը բերէ.
 — Զեռքերուս վրայ ինկաւ կաթիլ մ'արցունքի:

Լուռ հոգւոյդ մէջ աւերակներ կը մըխա՛ն,
 Աչքերդ անդունդ՝ ունին անհուն տրամուծիւն.
 Տանջուի՛ թող քընարիս լարն հեկեկուն,
 Բայց խօսէ՛ ինձ, ո՛վ դալկահար որս մահուան:

Ես դաշտերու տըղայ, երգի սիրահար,
 Կարօտ ունիմ ձայնիդ տաքուկ ալիքին,
 Երգէ՛, մըրրիկն ինչպէս կ'երգէ տենդադին.
 Քեզի պէս ե՛ս ալ անտունի եմ թշուառ:

Պանդուխտ եղբայր, ճամբուդ վըրայ վիհեր կան,
 Դէմքդ ալ տըխուր է եւ չունի հորիզոն,
 Դարձի՛ր տընակդ ու փլատակներ դրկէ՛ հոն,
 Քան թէ իյնաս մայթերու դո՛հ վաղաժամ:

Տեսայ Յոյսիդ տօգոյն ծաղիկն ոտքի տակ...
 Տենչերդ այրած մայրամուտի հրդեհով.
 Իսկ հոս դարուն, կը ծաղկի հոգն արեւով,
 Ու ծիծառներ բոյն կը շինեն անուշակ:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

(Շատ տարիներ ետք)

Սեւեր հագած, անապատէն ամայի
 Ո՞ր կը վազէք ուրուականներ մայրերու.
 Պահ մը կեցէ՛ք, խմբերդն հիմա կը սկսի.
 Վա՛յ ինձ, բուերն եկան ձեր տեղ երգելու:

Ծաղկած էր չորս կողմ... ո՞ւր են արտն ու ծաղիկ,
 Արեւն այրած է, աւա՛ղ, մայրն ու որդին.
 Կարմիր հրթիռ կը տեսնեմ ես ու մըրրիկ,
 Որ կը ծածկեն հորիզոններն աշխարհին:

Ա՛հ, կարաւանն էր, դրանա առջեւ կանգնեցաւ...
 Բայց ո՞ւր յանկարծ անյայտ կորաւ բազմութիւնն.
 Զըկա՛ն անոնք. ահանջիս մէջ կ'ապրի ցաւն
 Անմարդկային, կու լայ աչքիս մէջ արիւնն:

Ա՛ռ, պատռէ՛ սիրտըս բորենի դու անյադ,
 Նայէ՛ ափիս վըրայ ո՛րքան ոսկորներ
 Կ'երգեն անվերջ անապատ, մահ, աւերա՛կ...
 Խաւար կ'ուտեմ այգէն մինչեւ խոր դիշեր:

Փոթորիկի մէջ կը դառնան մուկերն
 Կոյս մարմիններ մարմար, խանձած մանուկներ...
 Մահուան թափօրն է, բոց աչքեր կը նային
 Անդունդներու՝ ուր արշալոյսն է կարմրեր:

Մեր ցաւերէն թող սարսուռայ տիեզերք,
 Թող անձրեւեն հազար աչքեր ամէն օր,
 Եւ անապատն ըլլայ քաղաք մ'ամբողջ վէրք,
 Եւ ուր ջուրերը դառնան թոյն մշտածոր:

Ա՛հ, փորեցէք դահիճներ, կամ փակեցէք
 Աչքերս ընդմիշտ... չորցաւ աղբիւրն յուզումի
 Երակին պէս սրտիս, ուր կայ միայն վէրք.
 Կը յորդի խորն հոգւոյս անձրեւն արցունքի:

Գորշ աղաւանձ՛ր, պիտի իյնաք նետահար
 Աւաղին վրայ՝ ծըծած վըրէժ անողոք.
 Մինչ կապոյտն է մեր ասպարէզն անըսպառ,
 Եւ մահը փառք՝ արծիւներու համար լուկ:

Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՆԱՇԵԱՆ